ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐՍՏՎՈՂ ՈՒՍՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱ՝ << ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ>>

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՄԵՀՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ Գ.ՆՈՐԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1.Հաղորդակցում հասկացողությունը: Հաղորդակցման ոճերը.....4

1.1. Հաղորդակցում հասկացողության բնութագիրը.....4

1.2.Հաղորդակցման ոճերը.....4

2.Մանկավարժական հաղորդակցումը: Կառուցվածքը,տարերը և գործառույթները .....6

2.1. Մանկավարժական հաղորդակցումը .....6

2.2.Հաղորդակցման գործընթացքի կառուցվածքը,տարերը և գործառույթները.....8

2.3Մանկավարժական հաղորդակցման ոճերը մոդելները.....

2.4Մանկավարժական ոչ խոսքային հաղորդակցում.....

2.5Մանկավարժական կոնֆլիկտներ.....

3.Եզրակացություն.....

## Ներածություն

Մարդը գտնվում է հաղորդակցման մեջ տանը , փողոցում, աշխատավայրում, իսկ օրինակ երեխան՝ մանկապարտեզում, դպրոցում և այլն: Թվում է թե հաղորդակցումը պարզ գործնթաց է, սակայն իրականում ամենևին էլ այդպես չէ: Կարելի է շատ պարզ ասել այն ինչ մտածում ես, և հաշվի չառնել այն փաստը, թե ինչպես է դա ընկալում դիմացինը :Անկախ մեր լավագույն մտադրություններից, արդյունքում կարող է ստացվել այնպես , որ մենք մի բան ենք ասում դիմացինը հասկանում է մեկ այլ բան , որն իր հերթին կարող է ստեղծել կոնֆլիկտ: Կոնֆլիկտի առկայությունը նկատելի է ինչպես մեծահասակների , այնպես էլ դպրոցականների շրջանում՝ աշակերտ-աշակերտ, աշակերտ –ուսուցիչ, նույնիսկ ուսուցիչ-ուսուցիչ հարաբերություններում: Ցավոք սրտի մեր օրերում նման երևույթների հաճախակի ենք հանդիպում , որն իր բացասական ազդեցությունն է ունենում մեր հասարակության զարգացման վրա:Այն տպավորությունն է ,որ մեր հասարակության մեջ վերանում է հաղորդակցվելու ,հանդուրժողականության, իրար լսելու,հասկանալու կուլտուրան:Իհարկե հասկանալի է ,որ այն ունի իր  օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, այն որ մեր երկիրը գտնվում է հետպատերազմյան ժամանակաշրջանում իր սոցիալական ու քաղաքական բազում դժվարություններով: Մարդկային հաղորդակցման հարաբերությունների վրա իր բացասական ազդեցությունն է ունենու ինտերնետից կախվածությունը՝ այն նվազեցնում է անմիջական շփումը: Հաղորդակցման ունակությունները անձի այն հատկություններն են ,որով նա փոխհարաբերություններ է հաստատում ուրիշների հետ,համարժեքորեն ձևակերպում իր ասելիքը և ընդունում ճշտորեն վերծանելով դրանք,ապահովելով պատշաճ հետադարձ կապը:Այդ նկատառումով փորձում ենք վեր հանել հաղորդակցման կարևորությունը և դրսևորումները:

Հետազոտման նպատակը հասարակության մեջ, դպրոցականների շրջանում հաղորդակցման բարելավմանն ուղված հաղորդկցման միջոցների կատարելագործումն է:

Ելնելով հետազոտման նպատակից կարևորում եմ դիտարկել հետևյալ  խնդիրները.

1.Պարզաբանել աշակերտ –աշակերտ, ուսուցիչ-աշակերտ և այլ կոնֆլիկտային հարաբերությունների առաջացման պատճառները:

2.Ներկայացնել հաղորդակցման այն կարևոր գործոնները ,որոնք կնպաստեն նշված խնդիրների լուծմանը:

## 1.Հաղորդակցում հասկացողությունը: Հաղորդակցման ոճերը

### 1.1. Հաղորդակցում հասկացողության բնութագիրը

Հաղորդակցումը մարդկանց միջև սոցիալական շփման զարգացման բազմապլանային գործընթաց է: Այն մարդու կենսագործնեության բավարար պայմանն է, հիմքն ու միջոցը, ինչպես նաև նրա առաջնային և հիմնարար պահանջմունքներից մեկը: Հաղորդակցման ամբողջ գործընթացում կարելի է տարանջատել երեք կողմեր՝ տեղեկատվության փոխանցում, փոխազդեցություն, փոխադարձ ընկալում: Հաղորդակցումը ոչ միայն անհատի այլև մարդկության գոյության ու զարգացման նախապայմանն է, ինչպես նաև անձի ձևավորման, սոցիալականացման կարևորագույն գործոնը: Դրա շնորհիվ ձևավորվում և զարգանում են հոգեկանին բնորոշ զուտ մարդկային ձևերը ու միջոցները, մասնավորապես գիտակցությունը և լեզուն:

Մարդկանց հաղորդակցման, մտքերի փոխանակման կարևորագույն միջոցը խոսքն է: Ուստի հաղորդակցման ժամանակ դիմում ենք լեզվի օգնությանը: Մարդը որպես անձ ձևավորվում ու զարգանում է հասարակության մեջ:

Տարբեր մտածողներ տարբեր կերպ են բնութագրել հաղորդակցումը: Ըստ Արիստոտելի մարդը հասարակությունից դուրս կամ Աստված է, կամ գազան: Կ.Մարքսը անձ դիտարկել է որպես հասարակական հարաբերությունների համակցություն և մարդը կախված է այն հասարակական հարաբերություններից, որոնց պայմաններում ապրում և գործում է: Ըստ Անտուան Էքզուպերիի հաղորդակցումը մարդկային գանձերից ամենաշքեղ գանձն է: Այն մարդկային հասարակության գոյության անհրաժեշտ պայմանն է, սերունդների կապի ու հաղորդակցման միջոցը, ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները:

### 1.2.Հաղորդակցման ոճերը

Հաղորդակցման ոճերը տեղեկատվության փոխանակման հիմնական եղանակներն են: Հաղորդակցման ոճերի տիրապետումը և դրանց կառավարումը, միջանձնային հարաբերությունների որակի բարելավման կարևորագույն մասն են:

Հաղորդակցման ոճերն են՝ ագրեսիվ, պնդողական, պասիվ: Մարդու միտքը բարդ է, այն պայմանավորված է հաղորդակցման ոճի ընտրությամբ: Մարդկանց միմյանց հետ շփումը թույլ է տալիս սովորել շրջակա միջավայրի բոլոր տեսակի հասկացություններն ու գաղափարները: Առանց այդ կարողության մարդը ոչ միայն հոգեբանական տեսանկյունից անապատային <<կղզիներ>> կլինի, այլ նաև չի կարող մտածել և գործել: Հասարակության մեջ ապրում ենք, ինքնահաստատվում, բայց դա բնավ չի նշանակում, որ մենք ամեն ինչ լավ ենք

անում: Այդ պատճառով կարևոր է ճիշտ ընտրել հաղորդակցման ոճը:Հաղորդակցման ոճերը ավելի մանրամասն ներկայացնենք:

Ագրեսիվ ոճը բնութագրող տարերն են բանավոր և ոչ վերբալ սպառնալիքները, ինչպես նաև մեղադրանքները ու նախատիքները: Այս ոճը բնութագրվում է զրուցակիցներից մեկի դոմինանտությամբ, երբ մեկը փորձում է գերակշռող ազդեցություն ունենալ մյուսի նկատմամբ: Այն ոչ թե արժեքավոր տեղեկատվության հաղորդում է, այլ ազդեցություն է դիմացինի կամ փոխազդեցությունը դիտողների վրա, նրանց նկատմամբ առավելություն ունենալու համար: Ագրեսիվ հաղորդակցման ոճը բնութագրվում է զայրույթ կամ թշնամանք արտահայտող պարբերական և ոչ խոսքային տարրերով: Օրինակ ձայնի բարձր տոնը, մկանների լարվածությունը և այլն:

Արգելված կամ պասիվ ոճը հիմնված է մտքերի և զգացմունքների զսպման վրա, որոնք կարող են արտահայտվել բնականոն իրավիճակում: Վերջնական նպատակն է սահմանափակել հաղորդակցության հոսքը, քանի որ այն այս կամ այն պատճառով ինչ որ բան է թաքցնում, մեղադրող տեղեկատվություն կամ վախ: Հնարավոր է նաև, որ այս ոճի նպատակն է երկխոսության ընթացքը հնարավորինս հաստատուն պահել կարողանալը: Գործնականում պասիվ հաղորդակցման ոճը բնորոշ է ամաչկոտ մարդկանց, ովքեր անվստահ են անձնական հարաբերություններում կամ ինտրովերտներ են, փորձում են ավելի քիչ շփվել մարդկանց հետ: Սա նշանակում է, որ վախը պարտադիր չէ, որ հարուցիչ լինի: Կան մարդիկ, ովքեր հասկանում են, որ լռելյայն վիճակը մեկուսացումն ու մենությունն է, և ինքնադրսևորվելու ցանկացած ջանք պետք է արդարացվի: Բացի այդ եթե կա կարևոր ասելիք, բայց կա հաղորդակցման վախ ասվում է շահագռգիռ անձի թիկունքում: Հաղորդակցման այս ոճի բնութագրերը ներառում են համեմատաբար քիչ աչքի ընկնող շփում, ձայնի ցածր տոն, կարճ արձագանքներ և այլն:

Ինքնահաստատման կամ պնդողական ոճը մարդու մտքերի և զգացմունքների ուղակի փոխանցումն է քանի դեռ մարդը հավատում է, որ այն արժեք ունի և որևէ մեկին ավելորդ չի անհանգստացնի: Այսինքն մարդկային շփումը ազնիվ ու թափանցիկ է, բայց չկա դոմինանտության երևույթը: Ավսպիսով նախատեսվում է սոցիալական հմտությունների հավասարակշռության հաստատունություն, ընդ որում հաշվի է առնվում երկու զրուցակիցների շահերը, այնպես որ համապատասխան տեղեկատվությունը սահուն հոսում է: Այս բնութագրումից ելնելով կարելի է ասել, որ պնդողական ոճը իրավիճակների մեծ մասի համար ցանկալի հաղորդակցման ձև է: Անկախ նրանից, որ պնդողական ոճը ամենահարմարն

է, այնուամենայնիվ կան հստակ իրավիճակներ, որոնց դեպքում պասիվ կամ ագրեսի ռճերը կարող են տեղին լինել, օրինակ ընդունելով թույլ տրված սեփական սխալը, կամ արտահայտվելով հիասթափություն մեկ այլ անձի սխալից: Ռացիոնալությունը միշտ չէ, որ գերազանցում է մարդկային հարաբերությունները: Իրականում այն հաճախ քիչ ազդեցություն ունի մարդու վրա:

## 2.Մանկավարժական հաղորդակցումը: Կառուցվածքը,տարերը և գործառույթները

### 2.1. Մանկավարժական հաղորդակցումը

Մանկավարժական աշխատանքի ոլորտը պատկանում է այսպես կոչված սոցիոմոմիկ տիպին: Այն մասնագիտական գործնուեություն է, որում առաջատար դերը կատարում է հաղորդակցության գործընթացը:

Հաղորդակցումը կրթությունը և դաստիարակությունը իրագործելու հիմնական միջոց է: Մանկավարժական հաղորդակցումը ըստ իրականացման ձևի ներկայացնում է սովորողի վրա մանկավարժի կողմից ( և հակառակը ) փոխազդեցության հնարների համակարգ (Ա.Վ.Պետրովսկի): Մանկավարժական հաղորդակցումը սովորողների և մանկավարժի կոլեկտիվ փոխազդեցության կարողությունների և հմտությունների համակարգն է, որի բովանդակությունը տեղեկատվության փոխանակումը, փոխըմբռնումը, կազմակերպումը, ուսուցումն ու դաստիարակչական ներգործության ցուցաբերումն է: Մանկավարժը հանդես է գալիս այդ գործընթացի խթանիչ, կազմակերպիչն ու ղեկավարը:

Մանկավարժական հաղորդակցման գործընթացում կարևոր է ուսուցչի խոսքային ընդունակությունը: Խոսքային ընդունակությունը ուսուցչի միտքն ու զգացմունքները խոսքի ինչպես նաև ժեստերի միջոցով պարզ ու հստակ արտահայտվելու ընդունակությունն է: Տեղեկատվության հաղորդումը ուսուցչից աշակերտին կրում է հիմնականում երկրորդ ազդարարային խոսքային բնույթ: Այսինքն հաղորդակցման մեջ հաշվի է առնվում խոսքի ներքին և արտաքին առանձնահատկությունները: Ուսուցչի խոսքը տարբերվում է ներքին ուժով ու համոզվածությամբ: Արհեստավարժ ուսուցչի խոսքը առաջին իսկ բառից, նախադասությունից ակտիվացնում է աշակերտի միտքը և ուշադրությունը: Ցանկալի է, որ ուսուցիչի խոսքին զուգակցվի նաև հումորը, սրամտությունը, կատակը, և իհարկե բացակայի հեգնանքը: Ուսուցչի խոսքը պետք է լինի չափի ու ձևի մեջ: Շատ կարևոր է ուսուցչի ձայնի տեմպը: Աշակերտին անհետաքրքիր է լսել միապաղաղ, ձգձգված խոսք: Իսկ արագ տեմպը խանգարում է յուացումը, հոգնեցնում և երեխայի մոտ առաւջացնում է պաշտպանական

արգելակում: Արհեստավարժ ուսուցիչը խուսափում է խոսքի դանդաղ տեմպից, քանի որ այն առաջացնում է ձանձրույթ, խուսափում է նաև ճչան ձայնից: Շատ կարևոր է, որ ուսուցչի ժեստերը լինեն չափի մեջ: Ուսուցչի անմիջական հաղորդակցման միջոցով իրականացվում է սոցիալական, բարոյական, գեղագիտական արժեքների փոխանցումը հասունացող սերնդին: Հաղորդակցման ընթացքում և հաղորդակցման միջոցով է կատարվում ուսուցիչ դաստիարակի դաստիարակչական ներգործությունները իր սաների գիտակցության և վարքի վրա: Հաղորդակցումը պահանջում է ոչ միայն գիտելիքներ և ընդհանուր մշակույթ, այլ նաև ստեղծագործական ինտուիցիա: Մանկավարժական հաղորդակցումը իրագործվում է ուսումնդաստիարակչական աշխատանքի բոլոր բնագավառներում ու փուլերում:

Նշենք ուսուցիչ դաստիարակի գործնուեության այն տեսակները, որոնք հաղորդակցումը դարձնում են առավել նշանակալի, դրանք են՝

փոխըմբռման մթնոլորտի, փոխադարձ վստահություն ու հարգանքի ստեղծում դասարանումն աշակերտների միջև

փոխըմբռնում ուսուցչի դաստիարակի և նրա սաների միջև

սովորողների խորհրդատվություն ուսումնադաստիարակչական նպատակով

ստեղծագործական աշխատանքի մթնոլորտի ստեղծում դասարանում

օգնություն աշակերտներին նրանց անձնական խնդիրների լուծման գործում

անկախության և միաժամանակ պատասխանատվության զգացումի ձևավորում

ուսուցիչների և աշակերտների հետաքրքրությունների ու պահանջմունքների համապատասխանություն

Մանկավարժական հաղորդակցման կրողը և ստեղծողը ուսուցիչ դաստիրակն է, ով արդյունավետ դասապրոցես անկացնելու համար պետք է ճիշտ նկիրթ խոսելու հմտություն ունենա, հաղորդակցման ընթացքում լինի բարեհամբյուր և հավասարակշռված: ՈՒսուցիչը պետք է աշակերտների հետ ունեցած հարաբերություններում կարևորի նրանց հոգեբանական առանձնահատկությունները: Յուրանքանչյուր աշակերտ ուսուցչի հետ հարաբերություններում պետք է սովորի հաղորդակցման ճիշ ձևերը, լսելու, հասկանալու և արձագանքելու տեխնիկանաները: Հաղորդակցման մեջ կարևոր գործոն է լսելը ինչը ցավոք մեր ժամանակներում մոռացության է մատնվել: Մանկավարժական հաղորդակցումը միայն ուսուցման և դաստիրակության նպատակով ուսուցչի և աշակերտի միջև կառուցվող

խոսքային հաղորդակցումը չէ: Իրականում այն ընդգրկում է բոլոր այն հաղորդակցման ձևերը, որոնց միջոցով տեղի է ունենում երեխայի ուսուցումը, դաստիարակությունը, զարգացումը և ձևավորումը: Այդ առումով որպես մանկավարժական հաղորդակցում կարելի է դիտել նաև ծնող-երեխա, ծնող-ուսուցիչ, ուսուցիչ–ուսուցիչ հարաբերությունները: Այն նշանակալի է դառնում հատկապես այնպիսի խնդիրների լուծման ընթացքում, ինչպիսիք են առարկայական ուսուցումը, դաստիարակությունը՝ շփման և համատեղ գործնուեության տեսանկյունից: Ըստ Վ. Ցելյուկոյի մանկավարժական հաղորդակցումը մասնագիտական հաղորդակցում է մանկավարժի և աշակերտի միջև դասի և արտադասարանական շփման ընթացքում, որն ունի որոշակի գոռծառույթներ՝ ուղված բարենպաստ հոգեբանական պայմանների ստեղծմանը, ուսումնական խմբի շրջանակներում ուսումնական գործնեության և ուսուցիչ աշակերտ հարաբերությունների լավացմանը: Այլ կերպ ասած այն հարաբերությունների հաստատման, կազմակեպման ու զարգացման, աշակերտի և ուսուցչի փոխըմբռման ու փոխազդեցության բազմաբնույթ գործընթաց է, որը ծնվում է համատեղ գործնուեության նպատակներից:

Հաղորդակցումը կայուն բնածին և բնական վարքագիծ է, որը զարգանում է մեր տարիքին զուգընթանց: Տարիների ընթացքում փորձում ենք շտկել մեր խոսքը և մշակել ժեստերը: Հաղորդակցման գոռծառույթի շնորհիվ հաղորդակցության գործընթացում մարդկանց միջև հաստատվում են փոխհարաբերություններ անհատական, խմբային, հասարակական մակարդակում: Ըստ մանկավարժ Վ. Դյաչենկոյի ուսուցումը մարդկահց միջև հատուկ կերպով կազմակերպված հաղորդակցում է, որի ընթացքում վերարտադրվում ու յուրացվում է պատմահասարակական փորձը, մարդկային գործնուեության բոլոր տեսակները: Այսինքն ուսուցման որակը ուղիղ կապ ունի ուսուցման գործընթացի մասնակիցների և հաղորդակցման որակի հետ: Պարզ է որ հաղորդակցման կարողությունները ձևավորվում են դպրոցում, քանի որ ազդում են ուսուցման գործընթացի վրա, այն տեղի է ունենում ուսուցչի անմիջական ղեկավարությամբ:

2.2.Հաղորդակցման գործընթացքի կառուցվածքը,տարերը և գործառույթները

Հաղորդակցումը բարդ գործընթաց է, ունի իր կառուցվածքը, բաղադրատարերը, մեխանիզմները, գործընթացային փուլերը և կողմերը: Հաղորդակցային գործընթացի կառուցվածքային տարերն են՝

1.հաղորդակցային սուբյեկտները

2.հաղորդակցման միջոցները

3.հաղորդակցվողների պահանջմունքները

4.հաղորդակցման արդյունքները

Հաղորդակցման սյուբեկը մարդն է: Հաղորդակցումը կարող է տեղի ունենալ երկու կամ ավելի մարդկանց միջև: Սուբյեկտների միջև հաղորդակցումը կազմակերպվում է տարբեր միջոցներով՝ երկխոսության, դասախոսության և այլն: Հաղորդակցման միջոցով մարդը բավարարում է իր հաղորդակցվելու պահանջմունքները:Հաղորդակցվում են առանձին մարդիկ՝սյուբեկտներ,իսկ այդ հաղորդակցության բնույթը կախված է այն բանից,թե ինչպիսի հարաբերություններ է առկա նրանց միջև: Այդ իմաստով այն կարող է ունենալ սուբյեկտ-սուբյեկտ, սուբյեկտ-օբյեկտ կառուցվածքը:Առաջին դեպքում հաղորդակցվողները իրար վերաբերում են,որպես սուբյեկտի,իսկ երկրորդ դեպքում որպես օբյեկտի՝ որպես միջոցի և գործիքի:Ելնելով հաղորդակցման բնույթից կարող ենք նշել,որ հաղորդակցվողներից յուրաքանչյուրը կարող է միաժամանակ դիտվել որպես սուբյեկտ և որպես օբեկտ:Որպես սուբյեկտ նա ճանաչում է իր ընկերոջը և արտահայտում իր վերաբերմունքը նրա հանդեպ, մյոս կողմից նա հանդես է գալիս որպես ճանաճողության  օբյեկտ նրա համար ում հետ հաղորդակցվում է :

Հաղորդակցումը կատարում է մի շարք կարևոր գործառույթներ, դրանք են՝

1. Կատարելագործում և ինքնաճանաչողություն
2. Սոցիալակա պարտականությունների իրականացում
3. Փոխհարաբերությունների ստեղծում
4. տեղեկատվության փողանցում
5. ներգործություն միմյանց վրա

Հաղորդակցման գործընթացն ունի բազմաթիվ կողմեր, որոնց ամբողջությունն էլ կազմում է դրա բովանդակությունը: Սովարաբար առանձնացվում է հաղորդակցման գործընթացի հետևյալ կողմերը՝ հաղորդակցման ընկալում, շփում, փոխներգործունեություն: Հաղորդակցման գործառույթի շնորհիվ մարդիկ շփվում են միմյանց հետ, հաստատում կապերն ու հարաբերություններ, որոնց միջոցով ստեղծվում են հայացքների, գաղափարների ընդհանրության, հոգեբանական ու բարոյական մտերմության դաշտ, համատեղ գործնուեության ծավալում և խնդիրներ լուծելու անհրաժեշտ և բավարար նախադրյալներ: Հաղորդակցմ ընթացքում մարդիկփոխգործումնփոխազդումենմիմյանցվրաընկալնգնահատմ, մեկնաբանում, բացատրում մեկը մյուսի վարքագծի պատճառները:Մանկավարժը

Հաղորդակցվում է երեխաների հետ , ուստի նրան անհրաժեշտ է հմտությունների պաշար տարբեր իրավիճակներում ճիշտ վերաբերմունք դրսևորելու ,արտահայտելու համար:Աշակերտները ենթագիտակցաբար ընկալումեն մանկավարժի կիրառած մահկավարժական հաղորդակցման բոլոր ձևերի բոլոր գործոնները ,և համապատասխան վերաբերմունքով արձագանքում դրանց:Մանկավարժական հաղորդակցման կարողությունները Վ.Մ.Ցելյուկոն դասակարգել է երեք խմբով՝

Միջանձնային հաղորդակցում

Միջազգային հաղորդակցում

Այլ մարդկանց հասկացման և ընկալման կարողություններ

Մանկավարժական հաղորդակցման ընթացքում հաճախ են հանդիպում դժվարություններ ,արգելքներ որոնք ունեն թե հոգեբանական և թե սոցիալական դրդապաճառներ:Մանկավարժական պրակտիկայում դրանք հանդիպում են հիմնականու այն պատճառով ,որ հաղորդակցման մի կողմը՝ երեխան գտնվում է ինքնաճանաչման փուլում և ունի ցայտուն արտահայտված ինքնահաստատման պահանջմունք:Մյուս կողմում մանկավարժը, որ մշտապես փորձում է գերակշռող դիրք ունենալ և երեխային ենթարկել իր հրահանգներին ու պահանջներին:Այստեղից էլ ծագում է հաղորդակցման տարամակարդ հարթություն:Աշխատանքի սկզբում անդրադարձ է կատարվել հաղորդակցման ոճերին:Այժմ անդրադառնանք մանկավարժական հաղորդակցման ոճերին:

2.3.Մանկավարժական հաղորդակցման ոճերը և մոդելները

Մանկավարժական հաղորդակցման արդյունավետությունը մեծապես կախված է մանկավարժի կողմից հաղորդակցման բոլոր տարական բաղադրիչների ճիշտ և ներդաշնակ համադրումից:Հաղորդակցման ոճը որոշիչ նշանակություն ունի ուսուցման և դաստիրակության գործընթացի արդյունավետության վրա ,ինչպես նաև անձի ձևավորման,

խմբում միջանձնային հարաբերությունների հաստատման որակի վրա:Դասապրոցեսի ընթացքում ուսուցիչը պետք է լինի նրբանկատ չնչին իսկ փոփոխությունների նկատմամբ, հարմարեցնի մանկավարժական ներգործության մեթոդը՝ տվյալ իրավիճակին համապատասխան :Ընդհանուր առմամբ տարբերվում են մանկավարժական գործունեության մի քանի ոճեր:Կարելի է առանձնացնել հետևյալ տեսակները. դեմոկրատական,ավտորիտար անհատական:

Դեմոկրատական ոճ. այս ոճը բնորոշվում է աշակերտի նկատմամբ ուսուցչի օբեկտիվ, հարգալից վերաբերմունքով,յուրաքանչյուրի անհատական հատկանիշների , պահանջմունքների հետ հաշվի նստելու ձգտումով:Ուսուցչի խոսքային վարքագծին բնորոշ են ճկունությունը ,կարծրատիպերի բացակայությունը:

Ավտորիտար ոճ. որին բնորոշ է գործնական մոտեցումը ,հաղորդակցության կառուցման ժամանակ հստակ արտահայտված ցուցումներ,պահանջներ,որոնց հիմքում դրված են աշակերտների նկատմամբ<<միջինացված>>պատկարացումներ:Հաղորդակցման մաքուր ոճ պրակտիկայում համարյա չի հանդիպում:Սակայն դրանց այս կամ այն տեսակի գերակշռումով է պայմանավորվում մանկավարժի անհատական հաղորդակցման ոճը, հետևաբար նրա գործնեության և հաղորդակցման որակը:

Անհատական ոճ. այս ոճի ձևավորումը անմիջապես չի կատարվում,այն ձևավորվում է երկարատև գործնուեության ընթացքում,իհարկե եթե մանկավարժը դրսևորում է ինքնավերլուծություն, ինքնաքննադատություն ,աննդհատ աշխատում է իր դրական հատկանիշների զարգացման ու բացասական հատկանիշների վերացման վրա:Ոճի դրական ու բացասական դրսևորումների մասին է խոսում սովորողի վերաբերմունքը՝մանկավարժի և նրա կողմից դասավանդվող առարկայի նկատմամբ:Հաղորդակցման ժամանակ մանկավարժի առաջին դիրքորոշումը արտացոլում է նրա կողմնորոշումը դեպի նրա անձը, ամեն հարցում նա իր մեջ փնտրու է թերություններ ու ձեռքբերումներ:Երկրորդի ժամանակ մանկավարժը փորձում է դիմացինի մեջ գտնել հաղորդակցմանը խանգարող հատկանիշներ:

2 .4. Մանկավարժի ոչ խոսքային հաղորդակցում

Մանկավարժական ոչ խոսքային հաղորդակցումը շարժումների ,դիրքի, տեսքի ու ձայնի դրսևորումներն են՝խոսքային տեղեկատվության, երկխոսության փոխանցման ժամանակ:Ոչ խոսքային հաղորդակցման միջոցները նպաստում են խոսքի իմաստի շեշտադրումն ուժեղացնելու համար:Մանկավարժը պետք է ունենա խոսքային և ոչ խոսքային հաղորդակցական,ինչպես նաև դրանք կարդալու կարողություններ և հմտություններ:Դրանով իսկ նա կարող է ուժեեղացնել հաղորդվող գիտելիքների,խրատի, խրախուսանքների ազդոցությունը ,ավելի ազդեցիկ դարձնել մատուցվող նյութի բովանդակությունը, ինչպես նաև երեխային ճիշտ ընկալելու

հավանականությունը:Մանկավարժը պետք է տիրապետի ժեստերի լեզվին,որպեսզի ժամանակին նկատի երեխայի կողմից ուշադրության շեղումը,հոգնացությունը և գտնի հետաքրքիր միջոցներ ու մեթոդներ թուլացնելու հոգեկան լարվածությունը,հանգստի դադար տա և համախմբի բոլորի ուշադրությունը:Հաղորդակցման կառուցման ժամանակպետք է հաշվի առնել նաև հնարավորինս մեծ թվով հանգամանքներ որոնք կարող են նպաստել դրա արդյունավետության մեծացմանը: Դրանցից են անձի որոշ պահանջմունքներ .

Ուշադրություն

Ապահովություն

Գնահատում

Իրավունք

Պատիժ և անպայման սեր

Ոչ խոսքային հաղորդակցման ժամանակ մեծ նշանակություն ունի մշակութային տարբերությունները:Օրինակ քաղաքակիրթ երկրներում զրուցակցի աջքին չնայելը նշանակում է վիրավորանք ,իսկ որոշ երկրներում այն կարող է արտահայտել հարգանք և պատկառանք:Եթե մարդը բութ մատով և ցուցամատով օղակ է կազմում,ապա ԱՄՆ-ում նշանակում է <<լավ>>իսկ Ֆրանսիայու <<0>>՝ոչինչ, արժեք չունեցող,Գերմանիյայում, Անգլիայում, Ավստրիայում վուլգար,վիրավորական ժեստ:Մանկավարժական ոչ խոսքային հաղորդակցումը կարևոր է ,քանի որ շատ դեպքերում օրինակ դասի ընթացքում ուսուցիչը առանց դասը ընդհատելու կարող է հայացքով սաստել իրեն վայելուչ չպահող աշակերտին:

Ուսուցչի բանավոր խոսքը ,որ լսում և հետագայում վերարտադրում են աշակերտները նախնական ուսուցման մասն են կազմում: Երեխաները ավելի շատ սիրում են լսել ,քան կարդալ:Բացի այդ ուսուցիչը պետք է աշակերտին սովորոցնի ինչպես կարդալ ,այնպես էլ ուշադիր լսել յուրացնել և վերարտադրել լսածը :Դասարանական զրույց կազմակերպել ոչ բոլոր ուսուցիչների մոտ է ստացվում, բայց դա բնավ չի նշանակում ,որ դա բնական հազվագյուտ տուրք է ,այլ դրա համար ,որ նույնիսկ շնորհաշատ ուսուցիչն էլ պետք է շատ աշխատի:Մանկավարժական զրույցը շատ է տարբերվում մյուս զրույցներից, այն աջքի է ընկնումիր հետաքրքրություններով, իր մեջ պարունակում է իսկական մանկավարժական որակ:Այն պետք է այնպիսին լինի,որ հեշտությամբ տպավորվի երեխայի ուղեղում:Լսելով զրույցը մինջև վերջ երեխան հիշի խոսքի սկիզբը ու միջին մասը:Զրույցի թեման կարող է

լինել այն ամենը ինչը մատչելի է երեխայի մտքին,այն պետք է մշակվի նախորոք ,որպեսզի զրույցի ժամանակ անհասկանալի, օտար դարձվածքներ չլինեն:Հաղորդակցման ընթացքում կրկնությունները պետք է հաճախակի չլինեն:Հաղորդված նյութերը պետք է կրկնել,ոչ նրա համար որ վերականգնվի մոռացածը ,այլ դրա համար որ կանխվի մոռանալու հնարավորությունը:Մոռացվածը կրկնեկու համար կրթությունը արդեն ցույց է տալիս ուսուցման թերություն:Երեխաները չեն սիրում այն ինչը սովորել ու մոռացել են , այլ շատ են սիրում պատմել այն ինչ հիշում են:Ուսուցիչը ներկայացնելով որևէ նյութ պետք է առանձնացնի նյութի գլխավոր գծերը կարևոր ու հետաքրքիր մանրամասնությունները :Եթե ուսուցիչը առաջին անգամ նյութը ներկայացնելիս այն կապի բազմաթիվ մանրամասնությունների ու բացատրությունների հետ ապա ամբողջ ինֆորմացիան կխարխլվի երեխայի գլխում:Երեխային նյութը ներկայացնելիս պետք է հստակ ընդգծել կարևոր գաղափարները, հասկացությունները, իսկ հետո հարցեր տալով ամբողջականացնել մատուցված նյութը: Հարցերը պետք է լինեն մատչելի՝ պարզից բարդը տանելով(Բենջալյան բլուր):Ավելի ընդունակ , ակտիվ երեխաներից պահանջել նյութը ամբողջական ներկայացնել:Կա մի կարևոր առանձնահատկություն ևս ,երեխային չպետք է ընդհատել նյութը ներկայացնելու ընթացքում:Աշակերտը նյութը վերջացնելուց հետո ,ուրիշները կարող են լրացնել նրա բացթողումները և անհրաժեշտ դեպքում կատարվի ուղղումներ ուսուցչի կողմից:Ուսուցիչը պետքե տիրապետի հաղորդակցման ընդհանուր կարողություններին և սովորողների մոտ դրանց ձևավորման համար անհրաժեշտ միջոցների ու ձևերին:Սակայն գործնականում հաճախ հանդիպում ենք այնպիսի փաստերի ,որ ուսուցչի մոտ ոչ բավարար մակարդակով են ձևավորված հաղորդակցման ընդհանուր կարողությունները:Ուստի զարմանալի չէ,որ աճող սերնդի հաղորդակցման մշակույթի ձևավորումը կառուցվում է անբավարար հիմքերի վրա,քանի որ անհնար է լիարժեք փոխանցել մի բան ,որը բացակայում է կամ թերի է :

2. 5.Մանկավարժական կոնֆլիկտներ

Մանկավարժական հաղորդակցման ըհթացքում չեն բացառվում նաև կոնֆլիկտային իրավիճակների առկայությունը:Մարդու կյանքը իրենից ներկայացնում է հաճախակի անցում մի կոնֆլիկտային իրավիճակից մյուսին:Լատիներենից թարքմանաբար կոնֆլիկտ(koflioctus) նշանակում է հակառակ հետաքրքիր հայացքների,լուրջ տարաձայնությունների, վեճերի բախում:Սողոմոն Իմաստունը իր առակներից մեկում ասել է ,որ բարկացկոտ մարդը կռիվ է ստեղծում ,իսկ երկայնամիտ մարդը վեճը հանգստացնում է :Մարդու հետ զուր տեղը մի վիճիր ,եթե նա քեզ վատություն չի արել:Մանկավարժը կարող է հաճախակի գտնվել

բախումնավտավգ իրավիճակում, քանի որ հաղորդակցվում է տարբեր բնավորությունների ու հետաքրքրասիրությունների,տարբեր ընտանիքներից սերված երեխաների ,ծնողների վարչական աշխատողների ,գործընկերների հետ:Հետևաբար ուսուցիչը պետք է ունենա բախումնավտանգ իրավիճակը կանխատեսելու և կանխելու մեծ զինանոց:Կոնֆլիկտները լինում են ներանձնային ,միջանձնային ,ներխմբային, միջխմբային:Կոնֆլիկտը հիմնականում առաջացնում են այնպիսի մարդիկ որոնք կոպիտ, բռնկվող, ագրեսիվ են:Նման մարդկանց համապատասխան արձագանք տալու համար կարևոր է ատրիբուցիան՝ այսինքը վարքագծի պատճառների բացահայտումը:Իր մանկավարժական պրակտիկայում ուսուցչի ռակցիան իր աշակերտների արարքներին ներկայացնու է մանկավարժական ներգործությունների մի ամբողջ համալիր՝դաստիարակչական ուսումնական,կրթական, զարգացող և ձևվավորող բաղադրատարերով:Սիմոն Սալովեչիկը ասել է.<<Ուսուցումը պայքար է աշակերտի հետ,որը բացառում է<<մենամարտը>>,այն համագործակցություն է ,հաղորդակցություն:Նմանատիպ բախումներից խուսափելու միջոցներից են բարյացկամությունը ,համբերությունը,արժանապատվությունը, մարդկայնությունը,փոխադարձ հարգանքը>>: Արհեստավարժ ուսուցիչը տիրապետելով հաղորդակցման հմտություններին կարողանում է տարբեր կոնֆլիկտային իրավիճակից խուսափել,կամ դուրս գալ:Հաղորդակցման հմուտությունները ձեռք են բերվում աշխատանքային տարիների ընթացքում:

Եզրակացություն

Այսպիսով ուսումնասիրելով ,վերլուծելով ինչ է հաղորդակցում ինչ է մանկավարժական հաղորդակցում դրանց գործառույթները ,ոճերը դերն ու նշանակությունը մարդկանց ,երեխաների կյանքում ,հասկանու ենք որ այն մի հզոր զենք է ,որին հստակ տիրապոտելով ուսուցիչը կարողանում է ցանկացած իրավիճակում աշակերտների միջև ստեղծել հոգեբանաբարոյական կայուն մթնոլորտ:

Մանկավարժական հաղորդակցման միջոցներին տիրապետելը նպաստում են ինչպես մեծահասակների այնպես էլ դպրոցականների շրջանում նվազեցնել կոնֆլիկտների քանակը:Սա իր հերթին կնպաստի դպրոցում երեխաների ուսուցման, դաստիարակության, հոգևոր ու բարոյական արժեքների բարձրացմանը:Որն էլ նշանակում է հասարակությանը պիտանի մարդ դաստիարակել:Այս պարագայում կունենանք կայուն հասարակություն և հզոր պետություն:

Գրականություն

1.Ն.Հակոբյան,Ս.Գևորգյան,Ա.հովհանիսյանԱ.Դավթյան <<Մանկավարժական հաղորդակցում>>

2.Ա.Վ.Պետրովսկի <<ընդհանուր հոգեբանություն>>

3.Կ.Դ.Ուշիմսկի <<Մանկավարժական ընտիր երկեր>>